

# ՀԱՎԵԼՎԱԾ

## ՀՅ ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԴԵՄ ԿՈՄԿՈՒՍԻ ՊԱՅՔԱՐԻ ՈՒՇԱԳՐԱՎ ԴՐՎԱԳՆԵՐԸ

1920-ական թվականների խորհրդային գաղտնի  
փաստաթղթերում\*

**Բանալի բառեր** - ՀՅ Դաշնակցություն ՀԿԿ Կենտկոմ, փաստաթղթեր, գաղտնի արձանագրություններ, կուսակցական ժողովներ, վարկաբեկում, բեմականացում, դատավարություններ, գնդակահարություն:

**Հայտնի է, որ Հայաստանի կոմունիստական կուսակցության համար ՀՅ Դաշնակցությունը գաղափարական և քաղաքական հակառակորդ էր, ուստիև խորհրդային իշխանության տարիներին նրա դեմ մղվող պայքարը կրում էր հետևողական, համակողմանի և համատարած բնույթ:**

1920-ական թվականներին ՀԿԿ-ի գրեթե բոլոր կուսակցական ժողովներում ու հավաքներում (համագումար, պլենում, բյուրո և այլն) պարբերաբար քննարկվում էին ՀՅԴ-ի դեմ պայքարին առնչվող խնդիրները, որոնք ընդգրկում էին հանրային կյանքի գրեթե բոլոր ոլորտները: Դա է պատճառը, որ թեև կոմկուսի 1920-ական թվականների որոշումներն ու դրանցից բխող հրահանգներն ընդգրկող փաստաթղթերի մեծագույն մասը ժամանակին կազմել ու հրատարակել է պրոֆետոր **Վլ. Ղազախեցյանը**<sup>1</sup>, բայց ՀԿԿ-ի հակադաշնակցական պայքարն այնքան ձյուղավորված ու բազմակողմանի էր, որ նյութերի մի մասը վրիպել է անգամ նման բարեխիղճ հետազոտողի աչքից:

Սույն հրապարակմամբ ներկայացնում ենք միայն այն փաստաթղթերը, որոնք դուրս են մնացել Վլ. Ղազախեցյանի կազմած «ՀՅ. Դաշնակցությունը և խորհրդային իշխանությունը» հարուստ ժողովածուից: Դրանք ՀԿԿ Կենտկոմի նախագահության և քարտուղարության **գաղտնի արձանագրություններն** են, որոնք վերաբերում են ՀՅԴ-ի նկատմամբ ՀԿԿ-ի որդեգրած քաղաքականությանը: Հրատարակվում են նաև նույն թեմային

\* Ընդունվել է տպագրության 14.08.2021:

1 Տե՛ս «ՀՅ. Դաշնակցությունը և խորհրդային իշխանությունը» (Փաստաթղթերի և նյութերի ժողովածու), պատ. խմբագիր և կազմող պրոֆ. **Վ. Ն. Ղազախեցյան**, հրատ. «ՀՅ.Դ. Բյուրո», Եր., 1999, 369 էջ:

առնչվող՝ Ռուսաստանի կոմկուսի Կովկասյան բյուրոյի և Անդրկովկասյան երկրամասային կոմիտեի նախագահության որոշ արձանագրություններ: Հրատարակվող փաստաթղթերը կարևորվում են այն պատճառով, որ դրանք պահվել են ՀԿԿ Կենտկոմի՝ «Հույժ գաղտնի» ծածկագրով «Հատուկ թղթապանակներում», որոնց մի մասն է միայն պահպանվել<sup>2</sup>: Դրանց համառոտ, բայց նաև խիստ հետաքրքրական տողերի ընթերցումից պարզ է դառնում, որ ՀԿԿ-ն իր կուսակցական ժողովներում նախապատրաստում էր ՀՅԴ «ինքնալուծարման» կամ վարկաբեկման նպատակ հետապնդող կոնկրետ միջոցառումները, ուստիև նախապես մշակում էր համապատասխան բեմականացումների սցենարներ ու նշանակում դրանց իրականացման հատուկ պատասխանատուներին: Նույն բեմականացումները գործի էին դրվում նաև անհատ դաշնակցականների դատավարությունների ընթացքում, որոնց դատավճիռները նույնպես նախապես քննարկում ու որոշում էր կոմկուսի ղեկավարությունը: Բայց այդ դատավճիռների հիմնավորման համար հորինված մեղադրանքները քննության պրոցեսում երբեմն հերքվում էին՝ զավեշտի առջև կանգնեցնելով ներկայացման մասնակիցներին: Ուստի որոշ դաշնակցականներ, որոնք, ըստ կոմկուսի որոշման, քրեական բնույթի հորինված ամբաստանություններով պետք է գնդակահարվեին որպես սովորական ավազակներ (տես թիվ 36–38 արձանագրությունները), այդպես էլ կենդանի են մնացել, իսկ ահա նման բեմականացումները կազմակերպողների ու իրականացնողների մի զգալի մասը դարձել է 1930-ական թվականների «մաքրագործումների» զոհը:

Հրապարակվող փաստաթղթերը պահվում են Հայաստանի ազգային արխիվի «Հայաստանի կոմունիստական կուսակցություն» ֆոնդում: Բոլոր փաստաթղթերը լույս են տեսնում ժուրնալից թարգմանությամբ (բացառությամբ թիվ 36-ի), բնագրային լեզվառձական առանձնահատկությունների պահպանմամբ, ժամանակագրական կարգով, անհրաժեշտության դեպքում՝ համապատասխան ծանոթագրություններով:

## Ավագ Ա. Հարությունյան

*Պատրմ. գիյր. թեկնածու*

---

2 ՌԿ(բ)Կ ԿԿ Կազմբյուրոյի 1922 թ. նոյեմբերի 30-ի որոշմամբ հաստատվել էր գաղտնի փաստաթղթերի պահպանման կարգը. 1. Այն անձանց շրջանակը, որոնց պետք է ուղարկվեին ԿԿ արձանագրությունների քաղվածքները, անհատապես պետք է որոշեր ԿԿ քարտուղարը: 2. Խստորեն արգելվում էր քաղվածքների փոխանցումն այլ անձանց: 3. Նման քաղվածքները պետք է պահպանվեին հատուկ անձնական գործերում, և երբեք չպետք է թույլատրվեր դրանց կցումը խորհրդային և արհմիութենական գործավարությանը: 4. Խստորեն արգելվում էր պատճենահանումը և գրավոր հղումների կատարումը խորհրդային և արհմիութենական գործավարության մեջ: 5. Կարգը խախտողները ենթակա էին կուսակցական խստագույն պատասխանատվության:

ԹԻՎ 1

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՌԿ(Բ)Կ ԿԿ<sup>3</sup> Կովկասյան բյուրոյի<sup>4</sup> պլենումի նիստի, 1921 թ. հուլիսի 3

Որոշեցին՝

Առաջարկել Վրաստանի, Ադրբեջանի և Հայաստանի, Լեռնականների<sup>5</sup> ու Դադստանյան հանրապետությունների Չեկաներին<sup>6</sup> անմիջապես զբաղվել մենշևիկների, մուսավաթիստների, դաշնակների<sup>7</sup>, Լեռնականների հակահեղափոխական կուսակցությունների և այլ կազմակերպությունների վերնախավի լիկվիդացիայով<sup>8</sup>:

ՀԱԱ, ֆ. 1, ց. 1, գ. 47, թ. 4: Պատձեն: Մեքենագիր:

ԹԻՎ 2

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 24

ՀԿ(Բ)Կ<sup>9</sup> ԿԿ Նախագահության<sup>10</sup> նիստի, 30/V-1922 թ.

Լսեցին՝

12. Էջմիածնի գավառում թուրքահայերի<sup>11</sup> շրջանում դաշնակների կողմից տարածվող սադրանքների մասին:

Որոշեցին՝

Սադրիչների և տարածվող սադրանքների դեմ պայքարի նպատակով թուրքահայերի շրջանում քարոզելու համար Էջմիածնի գավառ ուղարկել Գրիգոր Վարդանյանին<sup>12</sup> և Թոյնյանին<sup>13</sup>:

ՀԱԱ, ֆ. 1, ց. 2, գ. 5, թ. 30ա: Բնագիր: Մեքենագիր:

3 Ռուսաստանի կոմունիստական (բանվորական) կուսակցության Կենտրոնական կոմիտե:

4 Կովկասում (հատկապես Անդրկովկասում) Ռուսաստանի կոմունիստական (բանվորական) կուսակցության ղեկավար կուսակցական մարմինը 1921 թվականին:

5 Հյուսիսային Կովկասի:

6 Չեկա – Чрезвычайная комиссия, արտակարգ հանձնաժողով – 1920-ական թվականներին խորհրդային պետական անվտանգության մարմինների անվանումը

7 Կոմկուսի փաստաթղթերում գերազանցապես օգտագործվում է «դաշնակ» ձևակերպումը:

8 1921 թ. հունիսի 10-ին Փարիզում Հայաստանի, Վրաստանի, Ադրբեջանի և Լեռնականների հանրապետությունների ներկայացուցիչները կնքեցին համաձայնագիր, ըստ որի՝ ձևավորվելիք Կովկասյան համադաշնությունն ունենալու էր հակախորհրդային բնույթ (մանրամասն տես «ԿՈՎԿԱՍՅԱՆ ՏՄՆ ՆԱՍՆԱԳԻԾԸ 1921-1922 ԹՎԱՎԱՆՆԵՐԻՆ ՀՅ Դաշնակցության հավասարակշռող աշխարհաքաղաքական դերակատարության լույսի ներքո, «ՎԷՆ», Եր., 2015, N 4, էջ 182-220): Նշյալ հրահանգի կատարման մասին նյութեր չհայտնաբերվեցին, գոնե ՀՅԴ ղեկավարների պարագայում այն հնարավոր չի եղել հաջողությամբ իրականացնել:

9 Հայաստանի կոմունիստական (բանվորական) կուսակցություն:

10 Կենտկոմի կազմից ընտրված բարձրագույն մարմին, որը հետագայում վերանվանվեց Բյուրո:

11 Նկատի ունեն արևմտահայ զաղթականներին:

12 Վարդանյան Գրիգոր (1868-1938) – ՀՍՍՀ ժողովրդական կոմիսարների խորհրդի եկեղեցական գործերով ներկայացուցիչ, 1924 թվականից Հայաստանի օգնության կոմիտեի քարտուղար, վարչության նախագահ: Բռնադատվել է, գնդակահարվել:

13 Հավանաբար նախկին դաշնակցական Հարություն (Արտեմ) Թունյանն է:

ԹԻՎ 3

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 30

ՀԿ(բ)Կ ԿԿ Նախագահության նիստի, 1/VII-1922 թ.

Լսեցին՝

10. Դաշնակների արկածախնդրությունից<sup>14</sup> հետո Հայաստանից Թավրիզ փախած նախկին սպա Ժորժիկ Բեկ-Ջուրաբովի դիմումը Հայաստան վերադառնալու թույլտվության մասին:

12. Բեկզադյանի<sup>15</sup> դիմումը դաշնակների կողմից իր հարցազրույցի խեղաթյուրման մասին:

Որոշեցին՝

10. Հարցը քննարկումից հանել և առաջադնել «դաշնակցություն»<sup>16</sup> կուսակցության մասին հարցի հետ:

12. Բեկզադյանին հանձնարարել [Երևանի] քաղխորհրդում Ջենովայի կոնֆերանսի<sup>17</sup> մասին զեկույցում հերքել «Ճակատամարտ» թերթում<sup>18</sup> իր հարցազրույցի վերաբերյալ դաշնակների տեղեկությունները:

ՀԱԱ, ֆ. 1, ց. 2, գ. 5, թ. 39: Բնագիր: Մեքենագիր:

ԹԻՎ 4

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 37

ՀԿ(բ)Կ ԿԿ Նախագահության նիստի, 1922 թ. օգոստոսի 1

Լսեցին՝

5. Ամիրխանյանի<sup>19</sup> զեկույցը անցյալ տարվա դաշնակների արկածախնդրությունից<sup>20</sup> հետո Հայաստանից փախածների նոր խմբի՝ Թավրիզից վերադարձի թույլտվության հնարավորության մասին:

Որոշեցին՝

Հանձնարարել ԱՀ-ին<sup>21</sup> կազմել փախստականների ցուցակները և անկետաներով ներկայացնել ՀԿ(բ)Կ ԿԿ հաստատմանը:

ՀԱԱ, ֆ. 1, ց. 2, գ. 5, թ. 58: Բնագիր: Մեքենագիր:

14 Նկատի ունեն 1921 թ. Փետրվարյան ապստամբությունը:

15 **Բեկզադյան Ալեքսանդր** (1879-1939) – 1920-1921 թթ.: ՀԽՍՀ արտաքին գործերի ժողկոմ, 1930-1934 թթ.: ԽՍՀՄ դեսպան Նորվեգիայում, 1934-1937 թթ.: Հունգարիայում: Բռնադատվել է, գնդակահարվել:

16 Նշյալ ժամանակահատվածում կոմկուսի փաստաթղթերում «դաշնակցություն» ձևակերպումը գերազանցապես գրվում էր փոքրատառով:

17 Ջենովայի կոնֆերանսը տեղի է ունեցել 1922 թ. ապրիլի 10-ից մայիսի 19-ը: Խորհրդային Հայաստանի կողմից մասնակցել է Ալ. Բեկզադյանը:

18 «Ճակատամարտ» – օրաթերթ, ՀՅԴ օրգան: Լույս է տեսել Կ. Պոլսում 1918-1924 թթ.: Պատասխանատու խմբագիրներն էին Շ. Սիսաթյանը, Հ. Սիրունին և Մ. Ասլանյանը:

19 **Ամիրխանյան Շավարշ** (1894-1959) – 1921-1926 թթ.: ՀԽՍՀ արտակարգ հանձնաժողովի նախագահ, 1926-1929 թթ.: Կենտրոնական վերստուգիչ հանձնաժողովի նախագահ, Բանվորա-գյուղացիական տեսչության ժողկոմ:

20 Նկատի ունեն 1921 թ. Փետրվարյան ապստամբությունը:

21 Արտակարգ հանձնաժողով – Չեկա:

ԹԻՎ 5

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 41

ՀԿ(բ)Կ ԿԿ Նախագահության նիստի, 1922 թ. օգոստոսի 30

Լսեցին՝

11. Ամիրխանովի<sup>22</sup> զեկույցը հակախորհրդային կուսակցությունների աշխատանքի մասին:

Որոշեցին՝

Առաջարկել ԱՀ նախագահին նախապատրաստել ու մշակել նյութեր և [ՀԿ(բ)Կ] ԿԿ քարտուղարի ու [ՀԽՍՀ] Ժողկոմխորհի<sup>23</sup> նախագահի հետ համատեղ մոտ ժամանակներում գործնականում իրականացնել:

ՀԱԱ, ֆ. 1, ց. 2, գ. 5, թ. 61: Բնագիր: Մեքենագիր:

ԹԻՎ 6

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 16

ՌԿ(բ)Կ Անդրերկրկոմի<sup>24</sup> Նախագահության ընդլայնված նիստի, 1923 թ. հուլիսի 23

Լսեցին՝

I. Անդրկովկասյան դաշնակների<sup>25</sup> մասին:

Որոշեցին՝

1. Չառարկել ներկայացված հռչակագրի հրապարակման դեմ, նպատակահարմար համարել խմբագրական որոշ ուղղումներ կատարել՝ առանց դրա ոգու և հիմնական բովանդակության փոփոխման:

2. Անհրաժեշտ համարել, որ հռչակագիրը ստորագրվի դաշնակների տեղական ԿԿ բոլոր անդամների կողմից անհատապես:

3. Հռչակագրի հրապարակումից հետո կուսակցությանը պատկանելության համար ձերբակալված դաշնակներին ազատել:

4. Դրոյին և Կորյուն Ղազազյանին թույլատրել մեկնել արտասահման:

5. Հանրապետական ԿԿ-ներին և Չեկայի մարմիններին մատնանշել խոր.[իրդային] իշխանության նկատմամբ դաշնակների կողմից իրենց քաղաքական պարտավորությունների կատարմանը հետևողականորեն հետևելու անհրաժեշտությունը:

ՀԱԱ, ֆ. 1, ց. 3, գ. 11, թ. 39: Պատճեն: Մեքենագիր:

22 Ամիրխանյան Շավարշ:

23 Ժողովրդական կոմիսարների խորհուրդ՝ ԺԿԽ – 1920-1940-ական թվականների խորհրդային կառավարությունը:

24 Անդրկովկասյան երկրամասային կոմիտե – Անդրկովկասում կոմկուսի ղեկավար մարմինը 1922 թվականից:

25 Նկատի ունեն Անդրկովկասում (խորհրդային Հայաստանից դուրս) բնակվող դաշնակցականներին:

ԹԻՎ 7

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 41

ՀԿ(Բ)Կ ԿԿ Նախագահության նիստի, 30/VII–[19]23 թ.

Լսեցին՝

13. Անդրկովկասյան դաշնակների մասին ՌԿ(Բ)Կ ԱԵԿ<sup>26</sup> նախագահության և թ. 23/VII N 16 ընդլայնված նիստի արձանագրության քաղվածքը:

Որոշեցին՝

Ի գիտություն և ղեկավարում ընդունել: Խնդրել ՌԿ(Բ)Կ ԱԵԿ-ին հետագայում «դաշնակցություն» կուսակցության վերաբերյալ հարցերում նախօրոք հարցնել ՀԿ(Բ)Կ ԿԿ նկատառումները:

ՀԱԱ, ֆ. 1, ց. 3, գ. 7, թ. 34ա: Բնագիր: Մեքենագիր:

ԹԻՎ 8

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 19

ՌԿ(Բ)Կ Անդրերկրկոմի Նախագահության ընդլայնված նիստի,  
1923 թ. սեպտեմբերի 12

Լսեցին՝

11. «Սպիտակ<sup>27</sup>» սպաների մասին (Մյասնիկով<sup>28</sup>):

Որոշեցին՝

Համարել, որ մենշևիկյան Վրաստանի, մուսավաթական Ադրբեջանի և դաշնակցական Հայաստանի բանակներում ծառայած սպաները ոչ մի կերպ չեն կարող հավասարեցվել «սպիտակ» սպաներին, և որ նրանք կարող են գտնվել Կարմիր բանակում ծառայության մեջ:

ՀԱԱ, ֆ. 1, ց. 3, գ. 11, թ. 55: Պատձեն: Մեքենագիր:

ԹԻՎ 9

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 21

ՌԿ(Բ)Կ Անդրերկրկոմի Նախագահության ընդլայնված նիստի,  
1923 թ. նոյեմբերի 19

Լսեցին՝

17. «Դաշնակցության» համագումարի կազմակերպման համար ՀԿ(Բ)Կ ԿԿ-ին միջոցների տրամադրման մասին (Մյասնիկով):

Որոշեցին՝

Առաջարկել ամենաշտապ կարգով ՀԿ(Բ)Կ ԿԿ-ին ներկայացնել համագումարի գումարման մանրամասն նախահաշիվ<sup>29</sup>:

ՀԱԱ, ֆ. 1, ց. 3, գ. 11, թ. 86: Պատձեն: Մեքենագիր:

26 Անդրկովկասյան երկրամասային կոմիտե:

27 Այսինքն խորհրդային Կարմիր բանակի դեմ մարտնչող սպաներ:

28 **Մյասնիկյան Ալեքսանդր** (1886-1925) – 1921-1922 թթ. եղել է խորհրդային Հայաստանի ժողովուրդի նախագահ, 1922-1925 թթ. Անդրկովկասի Դաշնության Դաշնային խորհրդի նախագահ և ՌԿ(Բ)Կ Անդրերկրկոմի քարտուղար:

29 Դեռ 1923 թ. սեպտեմբերի 4-ին ՀԿԿ ԿԿ քարտուղար Ա. Շահումյանը Ալ. Մյասնիկյանին ուղարկել էր այդ նախահաշիվը (տես ՀԱԱ, ֆ. 1, ց. 3, գ. 19, թ. 84): Ալ. Մյասնիկյանը սեպտեմբերի 20-ին հայտնում էր 25 միլիարդի փոխանցման մասին (տես նույն տեղում, թ. 103): 1923 թ. հոկտեմբերի 31-ին, նոյեմբերի 21-ին և 23-ին Ա. Շահումյանը շեշտում էր ֆինանսների անհրաժեշտությունը. «Ստացված 25 միլիարդ ռուբլին ծախսվել է, սպասում ենք լրացուցիչ 30 միլիարդի շտապ փոխանցմանը: ԿԿ-ի ունեցած փողերը ծախսվել են համագումարի կազմակերպմամբ: ԿԿ գանձարկը դատարկ է, խնդրում ենք կարգադրել շտապ փող փոխանցել» (տես նույն տեղում, թթ. 119, 137, 144):

## ԹԻՎ 10

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 23

ՀԿ(Բ)Կ ԿԿ Քարտուղարության<sup>30</sup> նիստի, 12/XII-[19]23 թ.

Լսեցին՝

2. Կուսակցությունից հեռացած երիտասարդ դաշնակների համահայկական համագումարի օրակարգի մասին ՀԿԵՄ<sup>31</sup> ԿԿ Նախագահության ս. թ. 3/XII որոշումը<sup>32</sup>:

Որոշեցին՝

Հաստատել:

ՀԱԱ, ֆ. 1, ց. 3, գ. 9, թ. 55: Բնագիր: Մեքենագիր:

## ԹԻՎ 11

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 33

ՌԿ(Բ)Կ Անդրերկրկոմի Նախագահության ընդլայնված նիստի, 1923 թ. դեկտեմբերի 19

Լսեցին՝

36. Հայաստանի ԼԿԵՄ ԿԿ նախահաշիվը դաշնակցական աշակերտական միության համագումարի գումարման մասին<sup>33</sup>:

Որոշեցին՝

Այժմ աննպատակահարմար համարել համագումարի գումարումը: Իմանալ ՀԿ(Բ)Կ ԿԿ նոտիվները:

ՀԱԱ, ֆ. 1, ց. 3, գ. 11, թ. 100: Պատճեն: Մեքենագիր:

## ԹԻՎ 12

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 36

ՀԿ(Բ)Կ ԿԿ Նախագահության նիստի, 14/I-[19]24 թ.

Լսեցին՝

8. Երիտասարդ դաշնակների համագումարի գումարման<sup>34</sup> մասին (Գումեդին<sup>35</sup>):

Որոշեցին՝

30 Քարտուղարությունն աստիճանակարգով Նախագահությանը հաջորդող, ավելի նեղ կազմով վերադաս մարմին էր:

31 Հայաստանի կոմունիստական երիտասարդական միություն:

32 Հաստատվեց համագումարի հետևյալ օրակարգը. «1. Ընթացիկ մոմենտ, 2. Համագումար հրավիրող ինիցիատիվ բյուրոյի գեկուցումը, 3. Դաշնակցական կուսակցության և համակրող ուսանողների ու աշակերտական խմբակների մտայնության և գործելակերպի վերազնահատումը, 4. Ազգային հարցը և խորհրդային իշխանությունը» (ՀԱԱ, ֆ. 48, ց. 3, գ. 23, թ. 43):

33 Ա. Շահուվարյանը Ալ. Մյասնիկյանին 1923 թ. դեկտեմբերի 15-ին տեղեկացրեց այս նախահաշիվի ուղարկման մասին (տես ՀԱԱ, ֆ. 1, ց. 3, գ. 19, թ. 167):

34 Գումարվել է 1924 թ. փետրվարի 1-3-ին (մանրամասն տես «Հ.Յ. Դաշնակցությունը և խորհրդային իշխանությունը», էջ 162-187):

35 Գումեդին (Մելիք-Ղաղայան) Գուրգեն (1902-1938) – 1924-1926 թթ.՝ ՀԿԵՄ ԿԿ, 1926-1928 թթ.՝ ԼԿԵՄ Անդրերկրկոմի քարտուղար, 1933-1936 թթ.՝ Անդրկովկասի հողագործության ժողկոմի տեղակալ, 1936-1937 թթ.՝ ՀԽՍՀ հողագործության ժողկոմ: Բռնադատվել է, գնդակահարվել:

Համագումարի գումարման համար ՀԿԵՄ ԿԿ-ին նախահաշվով անհրաժեշտ միջոցներ հատկացնել:

ՀԱԱ, ֆ. 1, ց. 4, գ. 10, թ. 5: Բնագիր: Մեքենագիր:

ԹԻՎ 13

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 40

ՀԿ(Բ)Կ ԿԿ Նախագահության նիստի, 22/II-[19]24 թ.

Լսեցին՝

8. Դաշնակների կուսակցությունից հեռացածների խմբի կուսակցության<sup>36</sup> մեջ ընդունելության մասին (Շահսուվարյան<sup>37</sup>):

Որոշեցին՝

Կուսակցություն ընդունվելու մասին դիմումների քննարկման և յուրաքանչյուր դիմումատուի հետ հանգամանալից ծանոթության համար Շ. Ամիրխանյան, Ս. [Մելիք-]Օսիպով<sup>38</sup> և Ա. Շահսուվարյան կազմով հանձնաժողով ստեղծել:

ՀԱԱ, ֆ. 1, ց. 4, գ. 10, թ. 13: Բնագիր: Մեքենագիր:

ԹԻՎ 14

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 41

ՀԿ(Բ)Կ ԿԿ Նախագահության նիստի, 3/III-[19]24 թ.

Լսեցին՝

5. ՀԿ(Բ)Կ և ՀԿԵՄ նախկին դաշնակների և դաշտամուլների<sup>39</sup> անհատական ընդունելության կարգի մասին (Իոաննիսյան<sup>40</sup>):

Որոշեցին՝

Ընդունելությունն իրականացնել բջիջների<sup>41</sup> միջոցով ու երաշխավորել դիմումները նայելուց և յուրաքանչյուրի հետ ծանոթանալուց հետո: Հստակեցնել կուսակցություն և ՀԿԵՄ ընդունվելու դիմումներ տված ընկերների ցուցակը, որոնք ՀԿ(Բ)Կ ԿԿ-ին և ՀԿԵՄ-ին կից համապատասխան հանձնաժողովի կարծիքով պետք է ընդունվեն, և ընդունվողների նկատմամբ բացարկումների առկայության դեպքում հաշվի առնել այդպիսիք և սկզբունքային բնույթի ցանկացած առարկության դեպքում մերժել:

ՀԱԱ, ֆ. 1, ց. 4, գ. 10, թ. 14: Բնագիր: Մեքենագիր:

36 Նկատի ունեն կոմունիստական կուսակցությունը:

37 **Շահսուվարյան Ալեքսանդր** (1888-1938) – 1924-1928 թթ. ՀԿ(Բ)Կ ԿԿ քարտուղար, 1929-1931 թթ. Անդրկովկասի աշխատանքի ժողկոմի տեղակալ, 1931-1934 թթ. ՀՍԽՀ բանգյուղտնտեսության ժողկոմի տեղակալ, 1935-1937 թթ. ժողկոմխորհի նախագահի տեղակալ, 1937 թ. Երևանի քաղաքային խորհրդի նախագահ: Բռնադատվել է, գնդակահարվել:

38 **Մելիք-Օսիպով Սեդոյե** (1882-1938 – 1924-1928 թթ. ՀՍԽՀ ԱՀ նախագահ: Բռնադատվել է, գնդակահարվել:

39 Երիտասարդ դաշնակցականների կոմերիտականներին նման այսպիսի անվանումը ռուսերեն «կոմսոմոլ-կոմունիստական երիտասարդություն» (комсомол-коммунистическая молодежь) անվան համանունությամբ է:

40 **Հովհաննիսյան Աշոտ** (1887-1972) – 1920-1921 թթ. ՀՍԽՀ լուսավորության ժողկոմ, 1922-1927 թթ. ՀԿ(Բ)Կ ԿԿ գլխավոր քարտուղար: 1937-1943 թթ. Բռնադատվել է: ՀՅԴ-ի դեմ ուղղված բազմաթիվ հրապարակումների հեղինակ էր, սակայն քարոզից հետո վերանայեց իր հայացքները: Կոմկուսի ռուսերեն փաստաթղթերում միշտ նշվել է «Իոաննիսյան» ձևով:

41 Բջիջները կոմկուսի սկզբնական կուսակցական կառույցներն էին:



ԹԻՎ 15

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4

ՀԿ(Ր)Կ ԿԿ Նախագահության նիստի, 17/VI-[19]24 թ.

Լսեցին՝

1. Դաշնակների կուսակցությունից հեռացածների խմբի կուսակցության մեջ ընդունման գծով հանձնաժողովի գեկույցը (Շահուվարյան):

Որոշեցին՝

ա. Դաշնակների կուսակցությունից հեռացած 7 հոգու ցուցակը, որոնք ԿԿ-ին կից հանձնաժողովի կարծիքով պետք է ընդունվեն ՀԿ(Ր)Կ, հաստատել: (Ա. Իոանիսյանը մնում է իր հատուկ կարծիքին. անհնարին է գտնում Խ. Դանելյանի<sup>42</sup> ընդունումը ՀԿ(Ր)Կ որպես մտավորականի, որը Մեղրիում խորհրդային իշխանության օրոք՝ 1921-22 թթ., երկդիմի քաղաքականություն է վարել և դրա համար ազատվել է զբաղեցրած պաշտոնից և այժմ գաղափարապես դեռ չի հասցրել կազմալուծվել ու ընկալել մեր տեսակետը):

բ. Ընդունելությունն իրականացնել այն հիմնարկներին կից [կոմկուսի] բջիջների միջոցով, որտեղ նրանք ծառայության մեջ են, իսկ քրեական բնույթի բացարկումների առկայության դեպքում անհատապես քննարկել:

ՀԱԱ, ֆ. 1, ց. 4, գ. 10, թ. 38: Բնագիր: Մեքենագիր:

ԹԻՎ 16

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 17

ՀԿ(Ր)Կ ԿԿ Նախագահության նիստի, 17/IX-[19]24 թ.

Լսեցին՝

5. Դաշնակների կուսակցությունից հեռացածների խմբի կուսակցության մեջ ընդունման մասին:

Որոշեցին՝

ԿԿ Նախագահության 17/VI (Արձ. [անագրություն] N 4/1) որոշումը Պետրոսյանի<sup>43</sup> ՀԿ(Ր)Կ ընդունման մասին վերավճռել:

ՀԱԱ, ֆ. 1, ց. 4, գ. 10, թ. 52ա: Բնագիր: Մեքենագիր:

42 Անձը պարզել չհաջողվեց:

43 Անձը պարզել չհաջողվեց:

ԹԻՎ 17

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 18

ՀԿ(Ր)Կ ԿԿ Նախագահության նիստի, 18/IX-[19]24 թ.

Լսեցին՝

2. Թավրիզից Խորհ.[րդային] Հայաստան իրենց ընտանիքներով [ՀՅԴ-ից] անջատված դաշնակների խմբի էվակուացիայի մասին (ՌԿ(Ր)Կ ԱԵԿ-ի հեռագիր):

Որոշեցին՝

Հաղորդել ՌԿ(Ր)Կ ԱԵԿ-ին, որ [ՀԿ(Ր)Կ] ԿԿ անջատված դաշնակների էվակուացիայի դեմ չի առարկում հռչակագրի պայմանով, որտեղ կդատապարտեն իրենց կուսակցությանը, և [ՀՅԴ] պառակտման սրման ձգտումն անհրաժեշտ է համարում:

ՀԱԱ, Ֆ. 1, ց. 4, գ. 10, թ. 54: Բնագիր: Մեքենագիր:

ԹԻՎ 18

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 34

ՀԿ(Ր)Կ ԿԿ Նախագահության նիստի, 5/I-1925 թ.

Լսեցին՝

13. Արտասահմանյան սպիտակ<sup>44</sup> գրականության մասին (Բակունց<sup>45</sup>):

Որոշեցին՝

ա. Խնդրել ՌԿ(Ր)Կ ԿԿ-ին և ՌԿ(Ր)Կ ԱԵԿ-ին ուղարկել [ՀԿ(Ր)Կ] ԿԿ-ի համար ստացվելիք սպիտակ գրականության 1-ական օրինակ:

բ. Հանձնարարել Ս. Լուկաշինին<sup>46</sup> ներկայացվելիք ցուցակով կարգավորել արտասահմանյան սպիտակ գրականության ստացումը:

ՀԱԱ, Ֆ. 1, ց. 5, գ. 9, թթ. 2-3: Բնագիր: Մեքենագիր:

ԹԻՎ 19

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 38

ՀԿ(Ր)Կ ԿԿ Նախագահության նիստի, 10/II-[19]25 թ.

Լսեցին՝

1. Զեկույց արտասահմանյան գործերի մասին (Ս. Լուկաշին, Ա. Երզնկյան<sup>47</sup>, Ս. Փիրումով<sup>48</sup>):

Որոշեցին՝

44 Հակախորհրդային կուսակցությունների անվանումը: Այս պարագայում նկատի ունեն ՀՅԴ-ին:

45 **Բակունց Երեմիա** (1892-1938) – ՀԿ(Ր)Կ ԿԿ քարտուղար, 1929-1930 թթ: Տաշքենդի կոմիտեի քարտուղար, 1930-1937 թթ Կուլբիշևի մարզի բանգյուղտեսչության նախագահի տեղակալ: Բռնադատվել է, գնդակահարվել:

46 **Լուկաշին Սարգիս (Սրապիոնյան)** (1883-1937) – 1921-1922 թթ: ՀԿ(Ր)Կ ԿԿ քարտուղար, 1922-1925 թթ: ՀԽՍՀ ԺԿՆ նախագահ, ապա Անդրկովկասի ԺԿՆ փոխնախագահ: Բռնադատվել է, գնդակահարվել:

47 **Երզնկյան Արամայիս** (1879-1937) – եղել է ՀԽՍՀ հողժողկոմ, ԺԿՆ նախագահի տեղակալ, Երևանի քաղխորհրդի գործկոմի նախագահ: Բռնադատվել է, գնդակահարվել:

48 **Սիրունիկ Փիրումյանը** Անդրկովկասում և հատկապես Սիլյուեքում ՀՅԴ-ի դեմ ակտիվ աշխատողներից էր, հեղինակ ՀՅԴ-ի դեմ հրապարակումների:

ա. Ծայրահեղ անհրաժեշտության դեպքում նկատի ունենալ ՀԽՍՀ-ում և ԽՍՀՄ սահմաններից դուրս երկու տարում մինչև 25 հազար գաղթականի ընդունումը՝ նրանց արտասահմանյան միջոցներով տեղավորման պայմանով:

բ. Հաստատել, որ անհրաժեշտ և ցանկալի է հայերով բնակեցված վայրերում (Կոստանդնուպոլիս, Բալկաններ, Փարիզ, Մարսել, Ամերիկա) ԽՍՀՄ համապատասխան դիվերկայացուցչություններին<sup>49</sup> կից ունենալ «դաշնակցություն» կուսակցության կազմալուծման գծով աշխատանքի համար ընկերներ<sup>50</sup>:

գ. Արտասահմանում «դաշնակցություն» կուսակցության կազմալուծման գծով աշխատանքն ուժեղացնել և ըստ շրջանների «դաշնակցություն» կուսակցության կազմալուծման համագումարների հարցը մանրագնին նախապատրաստել:

դ. Անհրաժեշտ ճանաչել ՀՍԽՀ-ի հետ գաղափարապես կապված գաղթօջախների խորհրդամետ տարրերին հատուկ կազմակերպության մեջ համախմբելը:

ե. Հնարավոր ճանաչել արտասահմանցիներից Խորհրդային Հայաստանի բարեկամների ընկերության ստեղծումը<sup>51</sup> Խորհրդային Ռուսաստանի բարեկամների ընկերության օրինակով՝ ի հակակշիռ հայասիրական և այլ լիգաների<sup>52</sup>:

զ. Անհրաժեշտ ճանաչել հայկական գաղթօջախներում [ՀՍԽՀ] հանրապետական կապիտալի գերակշռման պայմաններով մի շարք հանրապետական ձեռնարկություններում մասնավոր ակցիաների տեղադրմանը համաձայնելը:

է. Սկսված աշխատանքը շարունակելու համար Ա. Երզնկյանին ուղարկել Եվրոպա: Մեկնելու ժամկետը ձևակերպել հատուկ:

ը. Միաժամանակ [ՀԿ(Բ)Կ ԿԿ] Քարտուղարությանը հանձնարարել.

I. Եվրոպայում և հետագայում Ամերիկայում առավել երկարատև աշխատանքի համար փնտրել այլ թեկնածու:

II. Հայկական գաղթօջախներում աշխատելու համար (գրական) աշխատանքի նպատակով ընկերոջ թեկնածություն առաջադրել:

ՀԱԱ, ֆ. 1, ց. 5, գ. 9, թ. 10-11: Բնագիր: Մեքենագիր:

49 Դիվանագիտական ներկայացուցչություններ:

50 Վ. Ղազարխանյանը հրապարակել է միայն Բ և Գ կետերը (տես «Հ.Յ. Ղազնակցությունը և խորհրդային իշխանությունը», էջ 304):

51 Նման ընկերության ստեղծման մասին հնարավոր չեղավ ձգարտել. Հավանաբար չի ստեղծվել:

52 Նկատի ունեն, որպես կանոն, ՀՅԴ-ի հետ կապված օտար հայասիրական կառույցներին:

ԹԻՎ 20

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 43

ՀԿ(Ր)Կ ԿԿ Նախագահության նիստի, 6/IV-[19]25 թ.

Լսեցին՝

14. Անդր.[կովկասի] ԱՀ-ում դաշնակներին քայքայելու գծով աշխատելու համար մեկ ընկերոջ հատկացման մասին (ՌԿ(Ր)Կ ԱԵԿ-ի Նախագահության N 30/4 նիստի արձ. [անագրության] քաղվածք):

Որոշեցին՝

Հանձնարարել [ՀԿ(Ր)Կ] ԿԿ Քարտուղարությանը Անդր.[կովկասի] ԱՀ-ում այդ ասպարեզում աշխատելու համար Հայ.[աստանի] ԱՀ-ից առանձնացնել մեկ ընկեր<sup>53</sup>:

ՀԱԱ, ֆ. 1, ց. 5, գ. 9, թ. 17ա: Բնագիր: Մեքենագիր:

ԹԻՎ 21

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 27

ՀԿ(Ր)Կ ԿԿ Քարտուղարության նիստի, 30/IV-[19]25 թ.

Լսեցին՝

5. Հայ.[աստանի] ԱՀ-ից մեկ ընկերոջ առանձնացման մասին՝ Անդր.[կովկասի] ԱՀ-ում դաշնակների քայքայման գծով աշխատելու համար ([ՀԿ(Ր)Կ] ԿԿ Նախագահության ս.թ. 6/IV արձ. քաղվածք):

6. ՀԿ(Ր)Կ նախկին դաշնակների ընդունելության մասին (Շահույժարյան):

Որոշեցին՝

5. Հետաձգել:

6. Առանձնացնել Ա. Շահույժարյան, Գ. Հակոբյան և Ա. Թաթյան կազմով հանձնաժողով և հանձնարարել կուսակցություն ընդունելության ողջ գործը հանգամանալից ուսումնասիրել և իրենց նկատառումները ներկայացնել ԿԿ Քարտուղարության հաջորդ նիստին:

ՀԱԱ, ֆ. 1, ց. 5, գ. 11, թ. 23: Բնագիր: Մեքենագիր:

ԹԻՎ 22

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 54

ՀԿ(Ր)Կ ԿԿ Նախագահության նիստի, 15/IX-[19]25 թ.

Լսեցին՝

1. Հակախորհրդային կազմակերպությունների աշխատանքի մասին (Մելիք-Օսիպով):

Որոշեցին՝

---

53 Անձը պարզել չհաջողվեց:

Հանձնարարել ԿԿ Քարտուղարությանը եղած մտքափոխանակության հիման վրա հակախորհրդային կազմակերպությունների դեմ [պայքարի] հստակ միջոցառումներ մշակել և [ՀԿ(Բ)Կ] ԿԿ Նախագահության հաստատմանը ներկայացնել:

ՀԱԱ, ֆ. 1, ց. 5, գ. 9, թ. 32: Բնագիր: Մեքենագիր:

ԹԻՎ 23

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 55

ՀԿ(Բ)Կ ԿԿ Նախագահության նիստի, 29/IX-[19]25 թ.

Լսեցին՝

8. ՀԿ(Բ)Կ ինքնալուծարված դաշնակների ընդունելության մասին (Շահույթային):

Որոշեցին՝

Առաջարկել [ՀԿ(Բ)Կ] Երևանի կոմիտեին համապատասխան բջիջների միջոցով իրականացնել:

ՀԱԱ, ֆ. 1, ց. 5, գ. 9, թ. 33: Բնագիր: Մեքենագիր:

ԹԻՎ 24

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

ՀԿ(Բ)Կ ԿԿ Նախագահության նիստի, 21/XII-[19]25 թ.

Լսեցին՝

5. ՀԿ(Բ)Կ ինքնալուծարված դաշնակների ընդունման մասին (Շահույթային):

Որոշեցին՝

ա. Առաջարկել Քարտուղարությանը ինքնալուծարված դաշնակների լավագույն մասի՝ ՀԿ(Բ)Կ ընդունման հարցի վերաբերյալ ԿԿ Նախագահության և պլենումի որոշումները շտապ կարգով կյանքի կոչել:

բ. Պարզաբանել գավկոմներին<sup>54</sup> «դաշնակցություն» կուսակցության կազմալուծման գծով մեր քաղաքականությունը և նրանց առաջարկել ՀԿ(Բ)Կ ընդունել գաղափարապես «դաշնակցությունից» հեռացած նախկին անդամներին՝ պահպանելով ըստ այդմ առավելագույն զգուշավորություն և զգոնություն:

գ. Դաշկուսակցության<sup>55</sup> հետագա կազմալուծման մասին հարցը լուծել՝ լսելով տվյալ հարցի մասին Հայ.[աստանի] ԱՀ-ի զեկույցը:

ՀԱԱ, ֆ. 1, ց. 5, գ. 9, թ. 47ա: Բնագիր: Մեքենագիր:

54 Կոմկուսի գավառային ղեկավար մարմին:  
55 Բնագրում այսպես է:

ԹԻՎ 25

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 10

ՀԿ(Բ)Կ ԿԿ Քարտուղարության նիստի, 7/1-[19]26 թ.

Լսեցին՝

3. «Դաշնակցություն» կուսակցության կազմալուծման գծով կազմակերպչական բյուրոյի<sup>56</sup> գումարման անհրաժեշտության մասին:

Որոշեցին՝

Հարցը տեղափոխել [ՀԿ(Բ)Կ] ԿԿ Նախագահություն:

ՀԱԱ, ֆ. 1, ց. 5, գ. 11, թ. 2: Բնագիր: Մեքենագիր:

ԹԻՎ 26

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 7

ՀԿ(Բ)Կ ԿԿ Նախագահության նիստի, 30/1-[19]26 թ.

Լսեցին՝

4. Թավրիզում իրավիճակի մասին<sup>57</sup> (Մ.[ելիք]-Օսիպով):

Որոշեցին՝

Խնդրել ՀամԿ(Բ)Կ<sup>58</sup> ԱԵԿ-ին Գ. Մեիրաբյանին Թավրիզում հյուպատոսարանին կից պատասխանատու պաշտոնի նշանակել<sup>59</sup>:

ՀԱԱ, ֆ. 1, ց. 6, գ. 6, թ. 8: Բնագիր: Մեքենագիր:

ԹԻՎ 27

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 20

ՀԿ(Բ)Կ ԿԿ Նախագահության նիստի, 2/VI-1926 թ.

Լսեցին՝

2. «Դաշնակցություն» կուսակցության ահաբեկչության մասին գործը (Մ.[ելիք]-Օսիպով):

Որոշեցին՝

ա. Հասարակական դատավարության պատրաստման համար գործը փոխանցել հանրապետության դատախազին և մեկշաբաթյա ժամկետում [ՀԿ(Բ)Կ] Նախագահությանը նկատառումներ ներկայացնել:

բ. Առաջարկել Նախագահության բոլոր անդամներին այդ ընթացքում ծանոթանալ տվյալ գործով առկա նյութերին:

ՀԱԱ, ֆ. 1, ց. 6, գ. 6, թ. 30: Բնագիր: Մեքենագիր:

56 Մանրամասն տես «Հ.Յ. Դաշնակցությունը և խորհրդային իշխանությունը», էջ 103-129:

57 Պայմանավորված էր Թավրիզում ՀՅԴ գործիչների ներկայությամբ և ակտիվությամբ, որոշ մասի հայրենադարձման հնարավորությամբ, մյուսների հակախորհրդային գործունեության ծավալումը չեզոքացնելու ձգտմամբ:

58 Համամիութենական կոմունիստական (բանվորական) կուսակցություն:

59 ՀՅԴ-ի դեմ պայքարի գծով:

## ԹԻՎ 28

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 22

ՀԿ(Ր)Կ ԿԿ Նախագահության նիստի, 9/VI-1926 թ.

Լսեցին՝

1. Դաշնակների դատավարության մասին (Վարդապետյան<sup>60</sup>):

Որոշեցին՝

Առաջարկել ԱրդարադատԺԿ-ին<sup>61</sup> դատական կարգով վերաքննել դաշնակների կողմից Մ. Խուշոյանի<sup>62</sup> ահաբեկչական սպանության գործը և պատրաստել դատական գործընթացի դրվածքը գործի սոցիալական և քաղաքական կողմերի ծավալման տեսանկյունից:

ՀԱԱ, ֆ. 1, ց. 6, գ. 6, թ. 51: Բնագիր: Մեքենագիր:

## ԹԻՎ 29

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 25

ՀԿ(Ր)Կ ԿԿ Նախագահության նիստի, 7/VII-[19]26 թ.

Լսեցին՝

12. «դաշնակցություն<sup>63</sup>» կուսակցության Բյուրոյի նամակը (տե՛ս «Հատուկ թղթապանակ»<sup>64</sup>):

Որոշեցին՝

Ի գիտություն:

ՀԱԱ, ֆ. 1, ց. 6, գ. 6, թ. 58: Բնագիր: Մեքենագիր:

## ԹԻՎ 30

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 33

ՀԿ(Ր)Կ ԿԿ Նախագահության նիստի, 7/IX-1926 թ.

Լսեցին՝

1. Խուշոյանի դատավարության մասին (Լ. Վարդապետյան):

Որոշեցին՝

ա. [ՀԿ(Ր)Կ] ԿԿ Նախագահության որոշումը Խուշոյանի դատավարության մասին թողնել ուժի մեջ:

60 ՀԽՍՀ արդարադատության ժողկոմ:

61 Արդարադատության ժողովրդական կոմիսարիատ:

62 Մանրամասն տե՛ս «Հ.Յ. Դաշնակցությունը և խորհրդային իշխանությունը», էջ 198-20, **Երզնկյան Ա.**, Մանուկ Խուշոյանի դատավարության գործում հասարակական մեղադրող Ա. Երզնկյանի ճառը, Եր., 1926, «Դաշնակցական տերրորիստների գործը», Եր., 1927, **Հակոբյան Ա.**, «Դաշնակցական տեռորիստների գործը». Մանուկ Խուշոյանի սպանության իրական պատմությունը, «Վէմ», Եր., 2017, N 2, էջ 151-169:

63 Փոքրատառով է գրված:

64 Այս կետն առանձին, ըստ կոմկուսի գործավարական կարգի, որակվել է որպես «Հույժ գաղտնի – Հատուկ թղթապանակ» («Особая папка»): Հիշատակվող նամակը չհաջողվեց հայտնաբերել:

բ. Հավանություն տալ Խուշոյանի ահաբեկչական սպանության գործով ԱրդարադատժԿ-ի ներկայացրած մեղադրական եզրակացության նախագծին:

գ. Դատավարության քաղաքական ղեկավարման համար առանձնացնել հանձնաժողով՝ Աշ. Իռանիսյան, Ա. Մռավյան և Զ. Աշրաֆյան<sup>65</sup> կազմով: Հանձնաժողովին հանձնարարել ներկայացնել դատարանի կազմը և հասարակական մեղադրյալներին, ինչպես նաև որոշել դատավարության ընթացքի ժամանակը:

ՀԱԱ, ֆ. 1, ց. 6, գ. 6, թ. 75: Բնագիր: Մեքենագիր:

ԹԻՎ 31

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 34

ՀԿ(Բ)Կ ԿԿ Քարտուղարության նիստի, 14/IX-1926 թ.

Լսեցին՝

1. «Դաշնակցություն» կուսակցության մասին Ա. Իռանիսյանի և Ա. Կարինյանի<sup>66</sup> թեզիսները:

2. Պարսկաստանում դաշնակների աշխատանքի զեկույցի գծով Գ. Մեհրաբյանի առաջարկությունները:

3. ԿԿ հանձնաժողովի առաջարկը Խուշոյանի գործով (Նախագահության N 33):

Որոշեցին՝

1. ա. Թեզիսների քննարկումը հետաձգել մեկ շաբաթով: Բ. Առաջարկել Ա. Իռանիսյանին և Ա. Կարինյանին իրենց մոտ եղած թեզիսների ամբողջ լրացուցիչ նյութը Նախագահության անդամներին և թեկնածուներին ուղարկել<sup>67</sup>:

2. Հաստատել (տե՛ս «Հատուկ թղթապանակ»):

3. Հաստատել լրացումներով (տե՛ս «Հատուկ թղթապանակ»<sup>68</sup>):

ՀԱԱ, ֆ. 1, ց. 6, գ. 6, թ. 76: Բնագիր: Մեքենագիր:

ԹԻՎ 32

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 41

ՀԿ(Բ)Կ ԿԿ Նախագահության նիստի, 2/XI-[19]26 թ.

Լսեցին՝

5. Խուշոյանի դատավարության գործընթացի նախապատրաստման հանձնաժողովի զեկույցը:

65 Աշրաֆյան Զարմայր (1898-1936) – 1927-1928 թթ. եղել է ՀԽՍՀ Գերագույն դատարանի նախագահ: Բռնադատվել է, գնդակահարվել:

66 Կարինյան Արտաշես (1886-1982) – 1921 թ. ՀԽՍՀ արդարադատության ժողկոմ, 1924-1928 թթ. ՀԽՍՀ Կենտրոնական գործադիր կոմիտեի նախագահ, ակադեմիկոս: ՀՅԴ-ի դեմ ուղղված բազմաթիվ գրքերի և հոդվածների հեղինակ է:

67 Ա. Հովհաննիսյանի գրքերից տե՛ս «Դաշնակցությունը և պատերազմը» (Եր., 1924), «Դաշնակցության աշխարհ» (Մոսկվա, 1929): Ա. Կարինյանի գրքերից տե՛ս «Դաշնակցությունը փաստերի դեմ» (Թիֆլիս, 1926), «Իմպերիալիստական պատերազմը և Հայաստանը» (Եր., 1924), «Դաշնակցությունը և իր զինակիցները» (Եր., 1932):

68 Հայտնաբերել չհաջողվեց:



6. Հակախորհրդային թերթերի մասին:

Որոշեցին՝

5. ա. Նկատի ունենալով իրադրությունը Լենինականում և դրա շրջակայքում (երկրաշարժ<sup>69</sup>)՝ մամուլում և բանվորա-գյուղացիական ժողովներում Խուշոյանի դատավարությամբ լայն գործընթացի իրականացումը ժամանակավորապես հետաձգել:

բ. Խուշոյանի դատավարության մասին ներկուսակցական կարգով բացատրական գեկույցներ ներկայացնել:

գ. Անհրաժեշտ ճանաչել ամբողջ դատավարության, ինչպես նաև առանձին ընկերների ելույթների լայն տարածման նպատակով առանձին գրքույկների հրատարակումը:

դ. Սասունցիների շրջանում հետագա աշխատանքի համար անհրաժեշտ համարել այդ շրջանի<sup>70</sup> ուսումնասիրությունը, մասնավորապես՝ այնտեղ նկատվող խմբավորումները, ՀԿ(բ)Կ ԿԿ ԱԲԲ-ին<sup>71</sup> առաջարկելով շրջանում ագիտարողչական աշխատանքի պլան մշակել:

ե. Անհրաժեշտ համարել դատավարությանը վերաբերող մի շարք գրքույկների հրատարակումը:

6. ա. Թույլատրել գրաքննության պայմաններով Հայաստանում խորհրդային կողմնորոշմամբ հետևյալ թերթերի («Երևան»<sup>72</sup>, «Նոր Աշխարհ»<sup>73</sup>, «Գաղափար»<sup>74</sup>, «Արև»<sup>75</sup>, «Հաղթանակ»<sup>76</sup> (Աթենքում տպագրվող), «Վերելք»<sup>77</sup>) և արտասահմանյան կոմսեկցիաների<sup>78</sup> հրատարակությունների տարածումը:

բ. Արգելել մյուս բոլոր հակախորհրդային թերթերի վաճառքը Հայաստանում:

ՀԱԱ, ֆ. 1, ց. 6, գ. 6, թ. 87ա: Բնագիր: Մեքենագիր:

ԹԻՎ 33

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 7

ՀԿ(բ)Կ ԿԿ Նախագահության նիստի, 13/1-19|28 թ.

Լսեցին՝

9. Դաշնակիզմի և այլնի վերաբերյալ գրքույկների հրատարակման անհրաժեշտության մասին:

69 Խոսքը Լենինականում (Գյումրի) 1926 թ. տեղի ունեցած երկրաշարժի մասին է:

70 Նկատի ունեն թախինի շրջանը:

71 Ագիտացիոն-քարոզչական բաժին:

72 «Երևան» – եռօրյա, ապա երկօրյա թերթ: Հրատարակվել է Փարիզում 1925-1930 թթ.: Պատասխանատու խմբագիրներն էին կոմկուսի գործիչներ Եղիա Չուբարը, Գրիգոր Մեիրաբյանը և Ղրատամատ Սիմոնյանը:

73 «Նոր Աշխարհ» – շաբաթաթերթ, օրգան Ամերիկայի բանվորական (կոմունիստական) կուսակցության հայկական ֆրակցիաների: Հրատարակվել է Նյու-Յորքում 1925-1930 թթ.:

74 «Գաղափար» – շաբաթաթերթ, ապա եռօրյա թերթ: Հրատարակվել է Թեհրանում 1925-1927 թթ.: Խմբագիրը նախկին դաշնակցական, ապա խորհրդամետ դարձած Արշակ Դազարյանն էր:

75 Նման անվանումով խորհրդամետ թերթ հիշյալ տարիներին չհայտնաբերվեց:

76 «Հաղթանակ» – օրաթերթ: Հրատարակվել է Աթենքում 1926-1927 թթ.:

77 «Վերելք» – ամսաթերթ, օրգան Ֆրանսիայի կոմկուսի հայ աշխատանքի խմբերի կենտրոնականի: Հրատարակվել է Փարիզում 1926-1927 թթ.: Խմբագիրը Ե. Չուբարն էր:

78 Արտասահմանում կոմունիստական կուսակցությունների հայկական սեկցիաներ:

10. Գաղափարական ճակատում պայքարի պլանի մասին:  
Որոշեցին՝

9. ա. Հանձնարարել Ա. Կարինյանին կազմել գրքույկ դաշնակիզմի, սպեցիֆիկների և այլ հակակոմունիստական կառույցների մասին՝ թեմաները նախապես համաձայնեցնելով Քարտուղարության հետ:

բ. Այդ նպատակով Ա. Կարինյանին տրամադրել եռամսյա արձակուրդ:

10. Հաստատել ներկայացված պլանը լրացումներով (տես հավելվածը):

ՀԱԱ, ֆ. 1, ց. 8, գ. 16, թ. 11: Բնագիր: Մեքենագիր:

Հավելված ՀԿ(բ)Կ ԿԿ Նախագահության N 7 նիստի արձ.[անագրության] կ.[ետ]10-ի

ՀԱԿԱՄՈՐՀՐԴԱՅԻՆ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅԱՆ (դաշնակների, մենշ-  
ևիկյան, սպեցիֆիկ և այլն) ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՃԱԿԱՏՈՒՄ  
ԱՇԽԱՏԱՆՔԻ ՈՒԺԵՂԱՑՄԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ<sup>79</sup>

1. Ստուգել ԼուսժԿ-ի<sup>80</sup> մարմինների (Համալսարան<sup>81</sup>, Հեղափոխության թանգարան, դպրոցներ, գրադարաններ, քաղլաքական) լուսավորության ցանց և այլն) աշխատանքը՝ կուսակցության առաջադրած և յուրաքանչյուր ոլորտի համար նախանշած խնդիրների իրականացման տեսանկյունից: Առաջարկել ԿԿ ԱԲԲ-ին ԼուսժԿ-ի հետ համատեղ մեկշաքայա ժամկետում կազմել ստուգման պլանը: Այդ նպատակով առանձնացնել հանձնաժողով հետևյալ կազմով՝ Մռավյան<sup>82</sup>, Սարատիկով<sup>83</sup>, Գուլի-Քելխյան:

Մոտակա 2 շաբաթում որպես նվազագույն խնդիր անհրաժեշտ համարել.

1. Հեղափոխության թանգարանի աշխատանքի որակի ուժեղացում և բարձրացում՝ ուշադրություն դարձնելով դաշնակների և մյուսների հակահեղափոխական էությունը բնութագրող հեղափոխական շարժման նյութերի մշակմանը և պատրաստմանը: Թանգարանին առաջարկել հրատարակության համար «փաստեր և փաստաթղթեր»-ի նյութեր նախապատրաս-

79 Հրապարակվում են գուտ ՀՅԴ-ին վերաբերող կետերը:

80 Լուսավորության ժողովրդական կոմիսարիատ:

81 Նկատի ունեն Երևանի պետական համալսարանը:

82 Մռավյան Ասքանազ (1885-1929) – 1921-1923 թթ.՝ ՀԽՍՀ արտաքին գործերի ժողկոմ, ստորագրել է Կարսի պայմանագիրը: 1923-1929 թթ.՝ լուսավորության ժողկոմ, «Սովետական Հայաստան» թերթի խմբագիր:

83 Սարատիկյան Հովսեփ (1887-1931) – 1923-1925 թթ.՝ ՀԽՍՀ զինվորական կոմիսար, 1925-1928 թթ.՝ Բանվորա-գյուղացիական տեսչության ժողկոմի տեղակալ, ապա՝ խճուղային ճանապարհների վարչության պետ:

տել<sup>84</sup>: Նկատի ունենալ համապատասխան առաջաբաններով [190]5 թվականի կոտորածի<sup>85</sup>, «դաշնակցություն կուսակցության 17 և 20 թվականների պատմության» մասին «փաստաթղթերի» հրատարակումը<sup>86</sup>: Հրատարակության նախապատրաստել «[19]14 թ. կամավորական շարժման» նյութեր: Այդ աշխատանքի համար թանգարանին կցել Կարո Ղազարյանին, Յաղուբյանին: Կուսպատի<sup>87</sup> աշխատանքի պլանաչափ ծավալման միջոցներ ձեռնարկել: Կուսպատի նյութերը կենտրոնացնել հենց Կուսպատում՝ այդ նպատակով պահանջելով առանձին ընկերների մոտ գտնվող նրա նյութերը:

2. Հանրային գրադարանի աշխատանքը բարելավելու համար միջոցներ ձեռնարկել, նրա աշխատակիցների կազմը որակապես ուժեղացնել: Ծիշտ այդպես ուշադրություն դարձնել գավառային գրադարանների աշխատանքին: Կցել Յաղուբյանին:

3. Ուշադրություն դարձնել Գիտության և արվեստի ինստիտուտին<sup>88</sup>, հարմարեցնելով պատմագրական բաժանմունքի աշխատանքը հակախորհրդային և հակակոմունիստական գաղափարախոսության դեմ պայքարի խնդիրներին: Քննարկել ինստիտուտի կազմը՝ սոցիալիստական շինարարության խնդիրները հասկացող և յուրացրած անձանց ղեկավար նշանակելով: Հանձնարարել Մռավյանին և Ազատյանին<sup>89</sup> ազիտկոլեգիայի միջոցով ինստիտուտի խնդիրների մասին զեկուցել [ՀԿ(բ)Կ ԿԿ] Նախագահությանը:

4. Առաջարկել Համալսարանի տնօրենությանը Ագիտբաժնին ներկայացնել Պատմա-բանասիրական և սոցիալ-տնտեսական ֆակուլտետների ուսանողների հետազոտական աշխատանքների (ատենախոսություններ և այլն) թեմաներ: Այդ բոլոր աշխատանքները պետք է հետապնդեն Հայաստանի պատմության անցյալում և ներկայումս շովինիզմի մերկացման և դրա բացահայտման խնդիր: Կցել այդ աշխատանքին Գուլի-Քնիսյանին և Արիսյանին<sup>90</sup>: Ծիշտ այդպես «Համալսարանի տեղեկագիրը»<sup>91</sup> պետք է հար-

84 Հեղափոխության թանգարանի հրատարակություններից տես «Հայաստանի ավտոնոմիան» և Անտանտան: Վավերագրեր իմպերիալիստական պատերազմի շրջանից: Մատ.-շար «Հայոց հարցի շարք», թ. 1, Եր., 1926, Ջեմալ փաշա, «Հայկական հարցը»: Մատ.-շար «Հայոց հարց»-ի շարք, թ. 2, Եր., 1927:

85 Նկատի ունեն հայ-թաթարական կռիվները: Տես, օրինակ, **Կարինյան Ա.**, Անդրկովկասը 1905-ին: Հեղափոխական և ազգային շարժումները, Մոսկվա, 1927: Այլ գրքեր հայտնի չեն:

86 ՀԿ(բ)Կ Կենտկոմին կից կուսպատմության ինստիտուտի հրատարակություններից տես, օրինակ, «Առաջին մասսայական-հեղափոխական շարժումները Հայաստանում: Մայիսյան ապստամբությունը»: Նյութեր և փաստաթղթեր: Կազմ. **Կ. Ղազարյան** և **Մ. Ներսիսյան**, Եր., 1932, «Սպարտակ. 1917-1920»: Հուշեր և վավերագրեր: Կազմ. **Մ. Ներսիսյան**, **Հ. Մամիկոնյան**, **Ս. Ասատրյան**, խմբ. **Կ. Ղազարյան**, Եր., 1935:

87 ՀԿ(բ)Կ Կենտկոմին կից կուսակցության պատմության ինստիտուտ:

88 «Հայկական ՍՍՀ Գիտության և արվեստի ինստիտուտի տեղեկագիր» – լույս է տեսել Երևանում 1926-1931 թթ.: 89 **Ազատյան Հայկ** (1881-1964) – 1924-1928 թթ. եղել է ՀԽՍՀ Կենտգործկոմի նախագահի տեղակալ: Հետագայում է գիտադասախոսական աշխատանքով: ՀԽՍՀ ԳԱ թղթակից-անդամ:

90 **Արիսյան Առն** (1903-1938) – 1934 թ.-ից ՀԿ(բ)Կ Կենտկոմի պրոպագանդայի և ագիտացիայի բաժնի վարիչ, 1936 թ.-ից լուսավորության ժողկոմ: Բռնադատվել է, գնդակահարվել:

91 «Երևանի պետական համալսարանի գիտական տեղեկագիր» – լույս է տեսել 1925 թվականից տարբեր վերնագրերով ու սերիաներով, 1925-1930 թթ.: «Գիտական տեղեկագիր» վերնագրով:

մարեցվի այդ խնդրի ոլորտին, առաջարկել նրանց աշխատանքի համապատասխանեցման պլան ներկայացնել (այդ ոգով «Տեղեկագրի» յուրաքանչյուր համարում նվազագույն նորմ համարել երեք աշխատանքի տպագրումը): Գաղափարախոսական ճակատում աշխատանքի ուժեղացման համար անհրաժեշտ համարել դրսից աշխատակիցների հրավիրումը:

II. Ագիտքարոզչական ցանցի աշխատանքի գծով անհրաժեշտ համարել.

1. [ՀԿ(բ)Կ ԿԿ] Ագիտքարոզչական կաթինետին կից ձևավորել Հայաստանի և Անդրկովկասի հեղափոխական շարժման պատմության բաժին: Այդ աշխատանքի իրականացումը հանձնարարել Կ. Ղազարյանին և Թելումյանին:

2. Քննարկել արհմիությունների կուսվուսավորության ցանցի աշխատանքի պլանը՝ համապատասխան սրբագրումների համար, եթե պլաններում նախատեսված չեն դաշնակների և այլ գաղափարախոսությունների դեմ պայքարի խնդիրները:

3. Բոլոր կոմբջիջներում, ՀԿԵՄ բջիջներում և տեղկոմների միջոցով «գաղափարախոսական ճակատում կուսակցության խնդիրների մասին» զեկույցներ պատրաստել: Ագիտբաժնին [հանձնարարել] թեզիսներ կազմել: Համապատասխան զեկուցողների առանձնացնել՝ նախապես հրահանգավորելով նրանց:

4. Կազմակերպել մոտակա ամսվա ընթացքում հանրային դասախոսություններ՝ ա. «դաշնակցություն» կուսակցության, նրա քաղաքականության և մարտավարության մասին, բ. ազգային մշակույթի մասին: Այդ ամենի համար մոբիլիզացնել Մռավյանին, Կարինյանին, Աշրաֆյանին, Ազատյանին, Երզնկյանին, Գուլի-Քելայանին, Չուբարին<sup>92</sup>, Վանանդեցուն<sup>93</sup>:

5. Օգտագործել ընտրությունները քաղաքական գործընթացի իրականացման համար՝ հատուկ նշելով «դաշնակցություն» կուսակցության հակահեղափոխական էությունը, լակեյական դերը:

III. Այդ ուղղությամբ գլխավոր խնդիրներից մեկը համարել մամուլի (պարբերական և ոչ պարբերական) ուժեղացումը: Այդ նպատակներով.

1. Հիմնական խնդիր համարել գրականագետների, լրագրողների, խմբագիրների, դասախոսների կադրերի ստեղծումը, ինչի համար [ՀԿ(բ)Կ ԿԿ] Մամուլի բաժնին նախաձեռնել միջոցներ մի շարք ընկերների ազատման, այդ ճակատում նրանց մասնագիտացման նպատակներով:

2. Մամուլում կատարել այդ հարցերի պլանաչափ և համակարգված լուսաբանում՝ ներկայացված ցուցակով ընկերների մոբիլիզացմամբ: Մա-

92 **Չուբար (Չուբարյան) Եղիա** (1898-1938) – խմբագրել է բազմաթիվ պարբերականներ, 1925-1927 թթ. Փարիզում «Երևան» և «Վերելք» թերթերը: Հեղինակ է հետևյալ գրքույկների՝ «Նոյեմբերի 29: Հիշողություններ» (Եր., 1925), «Դաշնակցությունը երրորդ շրջանում» (Եր., 1930): Բռնադատվել է, գնդակահարվել:

93 **Վանանդեցի (Փոքոսյան) Գուրգեն** (1898-1937) – գրականագետ, եղել է Հայաստանի Պրոլետգործների ասոցիացիայի ղեկավարներից: Բռնադատվել է, գնդակահարվել:

մուլի բաժնին և Ազիտբաժնին նախանշել թեմաների հստակ ցուցակ, որոնք պետք է առաջարկվեն ընկերներին:

3. Անհրաժեշտ համարել մի շարք գրքույկների, գրքերի (նախապես կարելի է հրատարակել ամսագրերում) հրատարակությունը: Այդ նպատակի համար ստորիցացնել Մոավյանին, Զ. Աշրաֆյանին, Վ. Պողոսյանին, Ա. Երզնկյանին, Վանանդեցուն, Ա. Կարինյանին: Նախանշել ազգային, ազգարային քաղաքականության, սմենովելիականության մասին մի շարք թեմաներ: Այդ ընկերներին առաջարկել ներկայացնել իրենց աշխատանքների թեմաները և պլանները:

4. Դիմել Հայաստանից դուրս գտնվող ընկերներին՝ հողվածների, գրքույկների, գրքերի ստացման համար:

5. Միջոցներ ձեռնարկել Կուսպատի կազմակերպման համար:

6. Հանձնարարել Մամուլի բաժնին պարզաբանել Հայաստանի և Անդրկովկասի հեղափոխական շարժման և խորհրդայնացման պատմության մասին գրքերի հրատարակման հարցը: Հրատարակել հատուկ պլեում քաղաքացիական պատերազմի մարտերում զոհված ընկերների մասին<sup>94</sup>:

7. Դիտարկել Հայպետհրատի պլանը՝ հարմարեցնելով գաղափարախոսական ձևակառույց պայքարի խնդիրներին:

8. Հրատարակել «Խորհրդային Հայաստան»-ում լույս տեսած լավագույն հողվածների ժողովածու: Հրատարակել այդ թեմաների շուրջ հրատարակված գրքերի և հողվածների մատենագիտական ուղեցույց<sup>95</sup>:

9. Հենց այդ ուղղությամբ զանգվածային հանրամատչելի գրականություն հրատարակել: Մամուլի բաժնին և Ազիտբաժնին [հանձնարարել] պարզաբանել և գրքույկների համար համապատասխան թեմաների ցուցակ կազմել:

10. Մինչ մայիսը (Հայաստանի «դաշնակ անկախության» 10-ամյակը) հրատարակել «անկախությունը» մերկացնող ժողովածու:

11. Շարունակել «Անաստված»-ի հրատարակությունը<sup>96</sup> և Հայաստանի անաստվածների ընկերության կազմակերպման միջոցներ ձեռնարկել:

12. Տեղական ընդդիմության աշխատանքի մասին գրքույկի հրատարակման միջոցներ ձեռնարկել:

13. Ինֆագայի<sup>97</sup> նյութերի (սպիտակգվարդիական մամուլի բյուլետեններ) որակի բարելավման և ընդլայնման միջոցներ ձեռնարկել:

14. «Նորք»-ի<sup>98</sup> փոխարեն հրատարակել «Խորհրդային Հայաստան»-ին կից քաղաքական-տնտեսական, պատմագիտական հանդես (ամենամսյա)<sup>99</sup>:

94 Տե՛ս, օրինակ, «Ղամարուլից - Չանգեզուր: Ժողովածու: Հիշողություններ Հայաստանի քաղաքացիական կռիվներից», կազմ. և խմբ. Խ. Աբրահամյան, Եր., 1931:

95 Տե՛ս, օրինակ, «Ինչ կարող է նոյեմբերյան հեղափոխության մասին: Գրականության ցանկ», կազմող՝ Ա. Բաբայան, ՀՍԽՀ Պետական գրապատ, Եր., 1935:

96 «Անաստվածը» 1928-1933 թթ. հրատարակվել է որպես հանդես, իսկ 1933-1935 թթ.՝ որպես թերթ:

97 Инфага – Информационное агенство – Տեղեկատվական գործակալություն:

98 «Նորք» – գրական, հասարակական և քաղաքական հանդես, տպագրվել է Երևանում 1922-1928 թթ., խմբարկական կոլեգիա՝ Ա. Հովհաննիսյան, Պ. Մակինցյան, Ա. Մռավյան, Ա. Կարինյան, Ե. Չարենց:

ՀԱԱ, ֆ. 1, ց. 8, գ. 16, թթ. 12-14: Բնագիր: Մեքենագիր:  
Թիվ 34

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 15<sup>100</sup>

ՀԿ(բ)Կ ԿԿ Նախագահության նիստի, 28/II-1928 թ.

Լսեցին՝

6. Դաշնակների և մենշևիկների մասին զեկույց (Մ.[ելիք]-Օսիպով):

Որոշեցին՝

Հանձնարարել հանձնաժողովին կարծիքների փոխանակման հիման վրա Նախագահության հաստատման համար բանաձև մշակել:

ՀԱԱ, ֆ. 1, ց. 8, գ. 31, թ. 15: Բնագիր: Մեքենագիր:

Թիվ 35

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 18<sup>101</sup>

ՀԿ(բ)Կ ԿԿ Քարտուղարության նիստի, 1928 թ. հունիսի 1

Լսեցին՝

23. Հայ.[աստանի] ՊԹՎ<sup>102</sup> ամփոփագիրը<sup>103</sup> սպիտակ մամուլի մասին (Կոստանյան<sup>104</sup>):

Որոշեցին՝

Հայ.[աստանի] ՊԹՎ ամփոփագրեր ստացողների ցուցակում ընդգրկել ԿԿ և ԿՎՀ<sup>105</sup> բոլոր անդամներին:

ՀԱԱ, ֆ. 1, ց. 8, գ. 31, թ. 124: Բնագիր: Մեքենագիր:

Թիվ 36

ՔԱՂՎԱԾՔ

ՀԿ(բ)Կ Էջմ.[իաձնի] գավկոմի նախագահության նիստի N. 29 արձանագրությունից,

կայացած 1928 թ. սեպտեմբերի 5-ին<sup>106</sup>

Լսեցին՝

8. ԹՈՒՆՆԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ԳՆԴԱԿԱՀԱՐՄԱՆ ԽՆԴԻՐԸ<sup>107</sup>:

---

99 Հրատարակվել են հետևյալ ամսագրերը՝ «Լենինյան ուղի» (ՀԿ(բ)Կ ԿԿ օրգան, քաղաքական-տնտեսական և կուլտուրական-գիտական ամսագիր, Եր., 1928-1933 թթ.), «Նոր ուղի» (գրական-գեղարվեստական, հասարակական, քաղաքական, տնտեսական և գիտական ամսագիր, Եր., 1929-1932 թթ., պատ. խմբագիրներ Ե. Չուբար, Դ. Սիմոնյան):

100 «Հույժ գաղտնի – Հատուկ թղթապանակ»: Ուղարկվել է ՀԿ(բ)Կ ԿԿ կենտրոնական վերստուգիչ հանձնաժողովին:

101 «Հույժ գաղտնի – Հատուկ թղթապանակ»:

102 Պետական քաղաքական վարչություն – խորհրդային պետանվտանգության մարմինների անվանումը 1922 թվականից, Չեկայի ժառանգորդը:

103 «Հավաքածու արտասահմանյան հայ սպիտակ մամուլի» – հրատարակիչ՝ Հայաստանի ՊԹՎ ինֆորմացիոն բաժին, ամսական պարբերական, հրատարակվել է Երևանում 1927-1929 թթ.: «Բյուլետեն արտասահմանի հայ սպիտակ մամուլի» – հրատարակիչ՝ ՀԿ(բ)Կ ԿԿ մամուլի բյուրո, լույս է տեսել Երևանում 1930 թ.:

104 Կոստանյան Հայկազ (1897-1938) – 1928-1930 թթ. ՀԿ(բ)Կ ԿԿ 1-ին քարտուղար, 1931-1934 թթ. ՀամԿ(բ)Կ Դրիմի մարզկոմի 1-ին քարտուղար: Բռնադատվել է, գնդակահարվել:

105 Կենտրոնական վերահսկիչ հանձնաժողով – կոմկուսի վերստուգիչ ղեկավար մարմինը:

106 Փաստաթուղթը հայերեն է:

107 Փաստաթղթում բոլոր գլխատառերով գրվածները բնագրային են:

Որոշեցին՝

Նկատի ունենալով, որ Օշականի բնակիչ ԹՈՒՆԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԿԱՐԳԵՐԻՆ ԱՆՀԱՐԱՋԱՏ անձնավորություն է, անդամ է ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆ կուսակցության և շրջանային ՀՐԱՀԱՆԳԻՉ ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉ, որ շրջանում նա բոլորի կողմից աչքի է ընկել իր ՀԱԿԱՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ աշխատանքներով, որ նրա նկատմամբ մինչև այժմ կտրուկ միջոցներ ձեռք չառնելը տեղին դժգոհություն է առաջացնում շրջանի կուսակցական կազմակերպության և ԼԿԵՄ-ի անդամների մեջ, գտնել անհրաժեշտ, որ ԱՎԱԶԱԿՈՒԹՅԱՆ գործով<sup>108</sup> նրան ԳՆԴԱԿԱՀԱՐՄԱՆ ենթարկելը ոչ միայն նպատակահարմար է, այլև շրջանի խորհրդային և կուսակցական աշխատանքների ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐԻՑ մեկը վերացնելու է, ուստի խնդրել կենտկոմին անպայման հաստատել ԹՈՒՆԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ ԳՆԴԱԿԱՀԱՐՄԱՆ ենթարկելու մասին գավկոմի տեսակետը և այդ առթիվ ազդել գեր. [ագոյն] դատարանի և կենտգործկոմի նախագահության վրա, գործի բեկման կարգով քննության ժամանակ:

ՀԱԱ, ֆ. 1, ց. 8, գ. 31, թ. 131: Բնագիր: Մեքենագիր:

ԹԻՎ 37

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 36<sup>109</sup>

ՀԿ(Բ)Կ ԿԿ Նախագահության նիստի, 1928 թ. սեպտեմբերի 21  
Լսեցին՝

30. Թոռնիկ Հովհաննիսյանի գործը (Շահուվարյան):

Որոշեցին՝

Անհրաժեշտ համարել Արդարադատության վճռաբեկ ասյաններով Թ. Հովհաննիսյանի գործով էջմիածնի ժողդատարանի վճռի հաստատումը:

ՀԱԱ, ֆ. 1, ց. 8, գ. 31, թ. 139: Բնագիր: Մեքենագիր:

ԹԻՎ 38

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 39<sup>110</sup>

ՀԿ(Բ)Կ ԿԿ Քարտուղարության նիստի, 1928 թ. հոկտեմբերի 2  
Լսեցին՝

30. Քաղ. [աքացի] Թոռնիկ Հովհաննիսյանի գործը:

Որոշեցին՝

Նկատի առնելով հայտնաբերված լրացուցիչ նյութերը՝ համաձայնել ԿԳԿ<sup>111</sup> նախագահության խմբակցության որոշման հետ քաղ. [աքացի] Թ. Հովհաննիսյանի ներման մասին:

ՀԱԱ, ֆ. 1, ց. 8, գ. 31, թ. 159: Բնագիր: Մեքենագիր:

108 Գործի մանրամասները պարզել չհաջողվեց, սակայն ակնհայտ է դրա քաղաքական ենթատեքստը:  
109 «Հույժ գաղտնի – Հատուկ թղթապանակ»: Ուղարկվել է մահ ՀայՊԹՎ-ին, Արդարադատության ժողկոմատին:  
110 «Հույժ գաղտնի – Հատուկ թղթապանակ»: 1928 թ. սեպտեմբերի 29-ին Քարտուղարության անդամների հարցման միջոցով:  
111 Կենտրոնական գործադիր կոմիտե – ՀԽՍՀ բարձրագույն օրենսդիր մարմնի անվանումը մինչև 1938 թ.:

ՀԿ(Բ)Կ ԿԿ Բյուրոյի փակ նիստի, 1930 թ. օգոստոսի 17

Լսեցին՝

2. Ռաշնակների մեկուսացման մասին:

Որոշեցին՝

1. Ընդունել Հայ.[աստանի]ՊԲՎ-ի առաջարկությունը դաշնակցական կուսակցության ղեկավար խավերի և ակտիվի մեկուսացման վերաբերյալ՝ 300<sup>113</sup> մարդ քանակով:

2. Հանձնարարել Օտյան, Մանդալյան և Եկալյան կազմով եռյակին 3-օրյա ժամկետում մշակել և ԿԿ հաստատմանը ներկայացնել դաշնակների մերկացման և քայքայման գծով զանգվածային-ագիտացիոն աշխատանքների առավելագույն ծավալման մասին շրջանային կոմիտեներին ուղղված փակ նամակի նախագիծ՝ վերջին ժամանակաշրջանում «դաշնակցություն» կուսակցության աշխուժացման և դաշնակ ակտիվի մեկուսացման գործողության կապակցությամբ:

ՀԱԱ, ֆ. 1, ց. 10, գ. 12, թ. 83: Բնագիր: Մեքենագիր:

**Ավագ Ա. Հարությունյան** – գիտական հետաքրքրությունների շրջանակն ընդգրկում է Հայկական հարցի և հայ ազգային-ազատագրական շարժման պատմության հիմնահարցերը:

Էլ. huugե՝ [avag.harutyunyan@yandex.com](mailto:avag.harutyunyan@yandex.com)

Summary

## REMARKABLE EPISODES OF THE COMMUNIST PARTY STRUGGLE AGAINST ARF DASHNAKTSUTYUN

In Soviet secret documents of the 1920s

Avag A. Harutyunyan

**Key words** – ARF Dashnaktsutyun, CPA Central Committee, documents, secret protocols, party meetings, defamation, staging, trials, shooting.

For the Communist Party of Armenia ARF Dashnaktsutyun was an ideological-political opponent, and the struggle against it during the years of Soviet

112 «Հույժ գաղտնի – Հատուկ թղթապանակ»:

113 Մեքենագիր բնագրում տպվել է 250, ապա ջնջվել և ձեռագիր դարձվել 300:



rule was of a multifaceted and widespread nature. The Communist Party of Armenia, with almost all its party decisions (especially: congress, plenum, bureau), regularly discussed the ARF issues of struggle.

Most of such documents covering the years of the 1920s were compiled and published in time by Professor V. Ghazakhetsyan. The current publication presents the documents that were left out of the mentioned collection.

Minutes of the Chairmanship of the Central Committee of the Communist Party of Armenia, the Presidency of the Caucasus Bureau of the Communist Party of Russia and the Transcaucasian Regional Committee are published. Special folders with the code “Top Secret” are used separately from the documents after named “Special Case”.

The documents are kept in the Fund of the Communist Party of Armenia of the National Archives of Armenia.

All documents are published from Russian translation, in chronological order, with appropriate footnotes if necessary.

Резюме

## ПРИМЕЧАТЕЛЬНЫЕ ЭПИЗОДЫ БОРЬБЫ КОММУНИСТИЧЕСКОЙ ПАРТИИ АРМЕНИИ ПРОТИВ АРФ ДАШНАКЦУТЮН

Из советских секретных документов 1920-ых годов

Аваг А. Арутюнян  
*Канд. ист. наук*

**Ключевые слова** - АРФ Дашнакцутюн, ЦК Коммунистической партии Армении (КПА), документы, секретные протоколы, партийные собрания, дискредитация, инсценировка, судебные процессы, расстрел.

Для Коммунистической партии Армении АРФ Дашнакцутюн (АРФД) была идейно-политическим противником, и борьба с ней в годы Советской власти носила многогранный и широкомасштабный характер. Коммунистическая партия Армении своими партийными решениями (съезд, пленум, бюро ЦК) регулярно обсуждала вопросы борьбы с АРФД.

Большинство документов о борьбе Коммунистической партии Армении против АРФ Дашнакцутюн вышли отдельным сборником, составленным и опубликованным профессором Вл. Казахецяном.

В настоящей публикации представлены ранее неизвестные документы, не вошедшие в упомянутый сборник. В ней публикуются протоколы Президиума и секретариата ЦК Компартии Армении, Кавказского бюро и Закавказского крайкома Компартии России. Особенно важны документы под грифом «Совершенно секретно» под названием «Особые папки».

Документы хранятся в фонде Коммунистической партии Армении Национального архива Армении.

Все документы публикуются в переводе с русского в хронологическом порядке, при необходимости, даются соответствующие сноски.

## REFERENCES

1. “Arajin massayakan-heghap’okhakan sharzhumneré Hayastanum: Mayisyan apstambut’yuně”: Nyut’er yev p’astat’ght’er: Kazm. K. Ghazaryan yev M. Nersisyan, Yer., 1932 (In Armenian).
2. “Ghamarluits’-Zangezur: Zhoghovatsu: Hishoghut’yunner Hayastani k’aghak’ats’iakan k’rivnerits’”: Kazm. yev khmb. Kh. Abrahamyan, Yer., 1931 (In Armenian).
3. “H.Y. Dashnaks’ut’yuně yev khorhrdayin ishkhanut’yuně” (P’astat’ght’eri yev nyut’eri zhoghovatsu): Pat. khmbagir yev kazmogh` prof. V. N. Ghazakhets’yan: Hrat. “H.Y.D. Byuro”, Yer., 1999 (In Armenian).
4. “Inch’ kardal noyemberyan heghap’okhut’yan masin: Grakanut’yan ts’ank’”: Kazmogh` A. Babayan, HSKHH Petakan grapat, Yer., 1935 (In Armenian).
5. “Kovkasyan tan nakhagitsě 1921-1922 t’vakannerin HY Dashnaks’ut’yan havasarakshrogh ashkharhak’aghak’akan derakatarut’yan luysi nerk’o, “Vēm”, Yer., 2015, N 4, ěj 182-220 (In Armenian).
6. “Spartak. 1917-1920”: Husher yev vaveragrer: Kazm. M. Nersisyan, H. Mamikonyan, S. Asatryan: Khmb. K. Ghazaryan, Yer., 1935 (In Armenian).
7. HAA, f. 1, ts. 1, g. 47, t. 4 (In Armenian).
8. HAA, f. 1, ts. 2, g. 5, t. 30a (In Armenian).
9. HAA, f. 1, ts. 2, g. 5, t. 39 (In Armenian).
10. HAA, f. 1, ts. 2, g. 5, t. 58 (In Armenian).
11. HAA, f. 1, ts. 2, g. 5, t. 61 (In Armenian).
12. HAA, f. 1, ts. 3, g. 7, t. 34a (In Armenian).
13. HAA, f. 1, ts. 3, g. 9, t. 55 (In Armenian).
14. HAA, f. 1, ts. 3, g. 11, t. 39 (In Armenian).
15. HAA, f. 1, ts. 3, g. 11, t. 55 (In Armenian).
16. HAA, f. 1, ts. 3, g. 11, t. 86 (In Armenian).
17. HAA, f. 1, ts. 3, g. 11, t. 100 (In Armenian).
18. HAA, f. 1, ts. 3, g. 19, t. 84 (In Armenian).
19. HAA, f. 1, ts. 3, g. 19, t. 103 (In Armenian).
20. HAA, f. 1, ts. 3, g. 19, t. 119 (In Armenian).
21. HAA, f. 1, ts. 3, g. 19, t. 137 (In Armenian).
22. HAA, f. 1, ts. 3, g. 19, t. 144 (In Armenian).
23. HAA, f. 1, ts. 3, g. 19, t. 167 (In Armenian).

24. HAA, f. 1, ts<sup>Վ</sup>. 4, g. 10, t<sup>Վ</sup>. 5 (In Armenian).
25. HAA, f. 1, ts<sup>Վ</sup>. 4, g. 10, t<sup>Վ</sup>. 13-14 (In Armenian).
26. HAA, f. 1, ts<sup>Վ</sup>. 4, g. 10, t<sup>Վ</sup>. 38 (In Armenian).
27. HAA, f. 1, ts<sup>Վ</sup>. 4, g. 10, t<sup>Վ</sup>. 52a (In Armenian).
28. HAA, f. 1, ts<sup>Վ</sup>. 4, g. 10, t<sup>Վ</sup>. 54 (In Armenian).
29. HAA, f. 1, ts<sup>Վ</sup>. 5, g. 9, t<sup>Վ</sup>. 2-3 (In Armenian).
30. HAA, f. 1, ts<sup>Վ</sup>. 5, g. 9, t<sup>Վ</sup>. 10-11 (In Armenian).
31. HAA, f. 1, ts<sup>Վ</sup>. 5, g. 9, t<sup>Վ</sup>. 17a (In Armenian).
32. HAA, f. 1, ts<sup>Վ</sup>. 5, g. 9, t<sup>Վ</sup>. 32-33 (In Armenian).
33. HAA, f. 1, ts<sup>Վ</sup>. 5, g. 9, t<sup>Վ</sup>. 47a (In Armenian).
34. HAA, f. 1, ts<sup>Վ</sup>. 5, g. 11, t<sup>Վ</sup>. 2 (In Armenian).
35. HAA, f. 1, ts<sup>Վ</sup>. 5, g. 11, t<sup>Վ</sup>. 23 (In Armenian).
36. HAA, f. 1, ts<sup>Վ</sup>. 6, g. 6, t<sup>Վ</sup>. 8 (In Armenian).
37. HAA, f. 1, ts<sup>Վ</sup>. 6, g. 6, t<sup>Վ</sup>. 30 (In Armenian).
38. HAA, f. 1, ts<sup>Վ</sup>. 6, g. 6, t<sup>Վ</sup>. 51 (In Armenian).
39. HAA, f. 1, ts<sup>Վ</sup>. 6, g. 6, t<sup>Վ</sup>. 58 (In Armenian).
40. HAA, f. 1, ts<sup>Վ</sup>. 6, g. 6, t<sup>Վ</sup>. 75-76 (In Armenian).
41. HAA, f. 1, ts<sup>Վ</sup>. 6, g. 6, t<sup>Վ</sup>. 87a (In Armenian).
42. HAA, f. 1, ts<sup>Վ</sup>. 8, g. 16, t<sup>Վ</sup>. 11-14 (In Armenian).
43. HAA, f. 1, ts<sup>Վ</sup>. 8, g. 31, t<sup>Վ</sup>. 15 (In Armenian).
44. HAA, f. 1, ts<sup>Վ</sup>. 8, g. 31, t<sup>Վ</sup>. 124 (In Armenian).
45. HAA, f. 1, ts<sup>Վ</sup>. 8, g. 31, t<sup>Վ</sup>. 131 (In Armenian).
46. HAA, f. 1, ts<sup>Վ</sup>. 8, g. 31, t<sup>Վ</sup>. 139 (In Armenian).
47. HAA, f. 1, ts<sup>Վ</sup>. 8, g. 31, t<sup>Վ</sup>. 159 (In Armenian).
48. HAA, f. 1, ts<sup>Վ</sup>. 10, g. 12, t<sup>Վ</sup>. 83 (In Armenian).
49. HAA, f. 48, ts<sup>Վ</sup>. 3, g. 23, t<sup>Վ</sup>. 43 (In Armenian).
50. **Hakobyan A.**, “Dashnaks‘akan teroristneri gortsē”. Manuk Khushoyani spanut‘yan irakan patmut‘yunē, “Vēm”, Yer., 2017, N 2, ēj 151-169 (In Armenian).
51. **Hakobyan A.**, “H.Y.Dashnaks‘ut‘yun kusaks‘ut‘yunē lutsarelu haykomkusi p‘ordzerē, Yer., 2020 (In Armenian).
52. **Hovhannisyan A.**, Dashnaks‘ut‘yan arit‘ov, Moskva, 1929 (In Armenian).
53. **Hovhannisyan A.**, Dashnaks‘ut‘yunē yev paterazmē, Yer., 1924 (In Armenian).
54. **Karinyan A.**, Andrkovkasē 1905-in: Heghap‘okhakan yev azgayin sharzhummerē, Moskva, 1927 (In Armenian).
55. **Karinyan A.**, Dashnaks‘ut‘yunē p‘asteri dem, T‘iflis, 1926 (In Armenian).
56. **Karinyan A.**, Dashnaks‘ut‘yunē yev ir zinakits‘nerē, Yer., 1932 (In Armenian).
57. **Karinyan A.**, Imperialistakan Hayastanē yev paterazmē, Yer., 1924 (In Armenian).
58. **Yerznkyan A.**, Manuk Khushoyani datavarut‘yan gortsum hasarakakan meghadrog h A. Yerznkyani charē, Yer., 1926 (In Armenian).